

ԲԱԳՐԱՏ ՈՒՆՈՒԲԱՐՅԱՆ
(ծննդյան 75-ամյակի առթիվ)



Լրացավ տղանդավոր գրող, պատմաբան, նշանավոր հասարակական գործիչ Բագրատ Ունուբարյանի ծննդյան 75-ամյակը:

Ծնվել է 1925 թ. դեկտեմբերի 9-ին, ԼՂ Մարտունու շրջանի Մուշկապատ գյուղում: Ավարտելով տեղի 7-ամյա դպրոցը, ուսումը շարունակել է Հարևան Հաղորտի գյուղի միջնակարգ դպրոցում: Հետո նա Շուշիի երկամյա ուսուցչական ինստիտուտի ուսանող էր, որի դասընթացը լրացնելուց Հետո մեկնում է Բաքու և ընդունվում Հայկական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: Գերազանց առաջադիմությամբ ավարտելով ինստիտուտը, վերադառնում է Արցախ և աշխատանքի անցնում Մարտունու շրջանի Գիշի գյուղի միջնակարգ դպրոցում: Շատ չանձնկատելով երիտասարդ մտավորականի պատրաստվածությունը, նրան դասախոսական աշխատանք են առաջարկում Շուշիից Ստեփանակերտ տեղափոխված ուսուցչական ինստիտուտում:

Շատ վաղ է սկսել ստեղծագործել դեռ միջնակարգ դպրոցում: Դրանք բանաստեղծություններ էին՝ գրված անվարժ գրչով, պատանեկան խանդավառությամբ, ապագայի վառ հրազներով առկեցուն: Միայն տարիներ անց, 1946-ին, թերթում տպագրվեց առաջին բանաստեղծությունը, որին Հաջորդեցին ուրիշներ: 1952թ. Բաքվում լույս տեսավ բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Երգեր աշխատանքի և խաղաղության» վերնագրով: Երիտասարդ բանաստեղծը ժամանակի ծնունդն էր, Հպարտ՝ իր երկրով ու ժողովրդով: Նրա երգերը Հաղթանակի և ցնծության երգեր էին: Կենսախինդ բանաստեղծը գովերգում էր Հայրենիքը, նրա արժանավոր զավակներին, ժողովուրդների եղբայրությունը, Հայրենիքի պաշտպաններին: 1956թ. Երևանում տպագրվեց Ունուբարյանի բանաստեղծությունների երկրորդ ժողովածուն՝ «Այս առավոտ» վերտառությամբ: Հայրենասիրական բանաստեղծությունների կողքին այստեղ արդեն տեղ էին գտել պանթիստական տրամադրության ստեղծագործություններ, որոնց թեմաներն էին՝ թավուտ անտառը, խշշուն Հասկերը, քնքույշ ամպիկը: Բանաստեղծին թոփում էին թախծոտ ուռենու չաքը, փխրուն Հերկերի Հողաբույրը, պաշտելի էակի վարսերը շոյող Հովր: Ժողովածուի քնարական ստեղծագործությունների կենտրոնում սերն է: Բանաստեղծը առանձին ջերմությամբ գովերգում էր ընկերոջ նվիրվածությունն ու անկեղծությունը, ընտանեկան ջերմությունն ու երջանկությունը:

Այս երկրորդ ժողովածուով ավարտվում է Ունուբարյան-բանաստեղծի ուղին՝ Բայց՝ իզուր: Նա դեռ խոսք ուներ ասելու Հայ պոեզիայի անդաստանում:

Բագրատն անցնում է արձակի: 1959թ. Երևանում տպագրվում է նրա «Հայրենի Հող» վեպը, ուր արտացոլված է Հետպատերազմյան ժամանակաշրջանի արցախյան գյուղի կյանքն՝ իր բազմերանգ դրսևորումներով: Վեպում առատորեն օգտագործված են

ժողովրդական բառ ու բանը, Հայկական լեռնաշխարհի գեղատեսիլ բնության նուրբ զգացողի բազմաթիվ նկարագրություններ:

Մեկ տարի անց, 1960թ., նա Բաքվում տպագրում է «Այգեստան» վիպակը, ուր պատկերված է կոլտնտեսային գյուղի առօրյան՝ իր հոգսերով և ուրախություններով:

1962 - 1963 թվականներն արտակարգ արգասաբեր եզան գրողի համար: 1962թ. Մոսկվայում ուուսերեն լույս տեսավ գրողի ստեղծագործությունների ժողովածուն՝ «В зорях Карабах» վերնագրով, ուր գետնի վրա էին «Повесть о моем д руге» վիպակը և յոթ պատմվածք: Ժողովածուն նվիրված էր Արցախի կոլտնտեսային գյուղի կյանքին:

Մեկ տարի անց, 1963թ., Բաքվում տպագրվում է Ուլուբաբյանի երկրորդ խոշոր վեպը՝ «Մարդը» վերնագրով: Այստեղ հիմնական գործող անձինք կուսակցական աշխատողներ են՝ բարոյական տարբեր ըմբռնումներով ու նկարագրով, մարդկային բարեմասնություններով և արատներով:

Նույն տարում, 1963թ., Երևանում լույս է տեսնում «Թարթառ» վերնագրով ժողովածուն, որին հետևում են «Լեռնաստան» (Բաքու, 1966), «Հատիկը չի մահանում» (Երևան, 1967) վիպակների ու պատմվածքների ժողովածուները: Բոլոր այդ ստեղծագործություններում Հայրենի Արցախն էր, նրա անկրկնելի բնաշխարհը, նրա մարդիկ՝ իրենց մաքառումներով ու հոգսերով, Հայրենապաշտությամբ ու արարումներով, սիրահար զույգերի երջանկությամբ ու հոգեկան տառապանքներով, ընկերական ուխտին հավատարմության ու դրժման դրսևորումներով:

Բազրառ Ուլուբաբյանը դարձավ Արցախի գրական կյանքի առաջատարը, հղավ մարզգործկոմի նախագահի՝ մշակույթի գծով տեղակալ, խմբագրեց «Խորհրդային Ղարաբաղ» թերթը, ապա ստանձնեց գրողների միության մարզային բաժանմունքի ղեկավարությունը: Այդ պաշտոնները նրա համար ինքնանպատակ չէին, այլ միջոց՝ առավել արդյունավետությամբ ծառայելու ազգային մշակույթին, արցախահայության շահերին:

Ժամանակներն անտանելի էին: Խորհրդային կենտրոնական իշխանություններին անտարբերության և թողտվության պայմաններում Աղբրեջանի ղեկավարները սեռնաբաժակ պայքար էին սկսել մարզի Հայության դեմ, բռնադատում էին նրա մարդկային տարրական իրավունքները, բիրտ ճնշումներ էին կիրառում Հայ դպրոցի և մշակույթի նկատմամբ: Հաճախ էին տեղի ունենում Հայրենի սպանություններ, իշխանությունները բոլոր միջոցները գործադրում էին, որպեսզի արցախահայերը նույնպես բռնեն իրենց Հայրենի բնաշխարհից զաղթելու ճանապարհը, ինչպես ստիպված արել էին նախիջանցիները: Մրաժամանակ, փորձված ու խորամանկ միջոցներով, բացահայտ թե դիվանագիտորեն, վարվում էր մարզը թուրքացնելու հետևողական քաղաքականություն, որի պատճառով բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ գնալով արագորեն իջնում էր Հայության բաժինը: Այդ ամենը չէր կարող առաջ չբերել ժողովրդի, մտավորականության, նույնիսկ կուսակցական աշխատողների և պետական ծառայողների մի մասի բացահայտ գժգոհությունը: Ինչ խոսք, կային նաև Բաքվի Հյուսիսկատարներ, որոնք ոչ միայն չէին միանում ընդհանուր գժգոհությանը, այլև դատապարտում էին իրենց Հայրենակիցների ազնիվ պոռթկումները:

Նախորդ տասնամյակներում նույնպես Արցախում ընդլզման շատ դեպքեր էին եղել, բայց դրանք առանձին անհատների գժգոհության արտահայտություն էին: Այժմ արցախահայության պայքարը թեև կոխում է նոր հանգրվան՝ զանգվածային ընդլզումների շրջանը:

Արցախահայության պայքարի շահերը հրամայարար պահանջում էին հրապարակ բերել վստահելի և աննկուն ղեկավարի, ազգային արժեքների և իրավունքների պաշտպանության նախանձախնդիր գործչի, որի նկատմամբ աներեր հավատ տածեին

բոլորը, և որն ունակ լինե՞ր կազմակերպելու ժողովրդի դիմադրական ուժը ադրբեջանական տմարդի և ազրեսիվ իշխանությունների դեմ մղվող պայքարում: Այդ դժվարին ու վտանգավոր դերակատարությունը վիճակված էր Բազրատ Ուլուբաբյանին: Նա դարձավ ադրբեջանական իշխանության դեմ ընդվզող արցախահայության գաղափարական առաջնորդը: Անվարան կարելի է ասել, որ դարաբաղյան նորագույն ազատագրական պայքարի ակունքներում Ուլուբաբյան գաղափարախոսը կազմակերպիչն ու ղեկավարն էր:

Անելիքները շատ էին, Համախոհների Հետ գաղտնի ժողովներ, մտավորականության Համախմբում, ժողովրդի ազգային զարթոնքին նպաստող ամենաբազմազան միջոցառումներ, բողոքագրերի կազմում և Հղում մոսկովյան բարձրագույն աստյաններին և այլն: Ձևայած Բաբվից եկող նախազգուշացումներին և սպառնալիքներին, պայքարի ղեկները մնացին անբեր և անկոտրում: Ադրբեջանի ղեկավարության զայրագին վերաբերմունքն էր առաջ բերել Հատկապես 1965թ. Հունիսին երկրի ղեկավարությանն ուղղված՝ Հայրենասեր 13 մտավորականների ստորագրած նամակը, որն անձամբ ԽՄԿԿ Կենտկոմ էր Հասցրել և այնտեղ զրույցներ ունեցել նամակի Հեղինակ Ուլուբաբյանը:

Հետևեցին աննախադեպ սպառնալիքներ Բաբվից: Բայց Բազրատը և նրա խիզախ Համախոհները մտադիր չէին ընկճվել ու տեղի տալ: Ուլուբաբյանը կազմում և ԽՄԿԿ Կենտկոմ է ուղարկում մի նոր բողոքագիր, որի տակ, նրանից բացի, ստորագրում են ևս երեք Հոգի: Մոսկվա Հասած այս երկրորդ դիմումից Հետո Ուլուբաբյանն ու իր ղեկները Բաբվի կողմից արդեն մեղադրվում են դաշնակցական-աճաբեկչական գործունեության մեջ:

1966թ. Երևանում Հայտնվեց 150-էջանոց անստորագիր մի մեքենագիր տեքստ, որը շուտով բազմացվեց ու տարածվեց: Չեռագիրը պատմում էր 1920թ. Հետո Արցախի գլխին եկած արհավիրքների, Ադրբեջանի տիրապետության տակ Հեծող Հայության դժվարին կյանքի մասին: Դրանից շատ չանցած, ԽՄԿԿ Կենտկոմը Երևանից ստացել էր ձեռագրի ուսերեն թարգմանությունը՝ մի ընդարձակ զրպարտչական վերլուծության Հետ: Զրպարտագրում մատնացույց էր արված նա՝ տեքստի Հեղինակը, Բազրատ Ուլուբաբյանը: Մոսկվան ՀԿԿ Կենտկոմին Հանձնարարել էր քննել Հարցը և պատասխանել: ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանից և Կենտկոմի Համապատասխան անդամներից քիչ ջանքեր չպահանջվեցին ձեռագրի Հեղինակին սպասվելիք պատիժներից փրկելու Համար:

Մարզում սկսվեցին աննախադեպ Հալածանքներ: Տասնյակ մարդիկ բանտերը նետվեցին, որտեղ շատերը մեռան՝ չդիմանալով բանտային կտտանքներին, ծեծ ու ջարդին: Մի խումբ մտավորականների Համար այլևս անՀնարին էր դարձել այնտեղ մնալը՝ Հատկապես այն պատճառով, որ Բաբվի իշխանություններն իրենց Հայաստաց ծրագրերի իրականացման գործընթացի մեջ ներգրավել էին մի խումբ ստրկամիտ Հայ պաշտոնյաների՝ Մեղրումովների, Կևորկովների և ուրիշների, որոնք իրենց գործողություններով ամեն կերպ աշխատում էին Հաճոյանալ թուրքերին:

Բազրատ Ուլուբաբյանը և նրա Հալածական գործակիցները ստիպված էին տեղափոխվել Հայաստան: Նրանք, որոնց այլևս արգելված էր վերադառնալ Հայրենի եզերք, Հիմնավորվեցին Հանրապետությունում, բայց իրենց խոհերով ու մտածումներով, իրենց որդիական սիրով միշտ մնացին Արցախ աշխարհի Հետ:

Սկսվում է Ուլուբաբյան գրողի ու գիտնականի ստեղծագործական կյանքի է՛լ ավելի բեղմնավոր՝ երկրորդ շրջանը, որը կարելի է բնութագրել որպես ամբողջական նվիրում գիտությանը: Նա Հիմնավորվում է Եղվարդ գյուղի իր Համեստ առանձնատանը, որի պատերից ներս վերջին երեսուն տարում արարել է բազմաթիվ մեծարժեք գործեր: Այստեղ է նա գրել «Կանթեղ» անունով վիպակների և պատմվածքների ժողովածուն (Երևան, 1976), «Սարգարապատ» վեպը (Բեյրութ, 1987, 1988, Երևան, 1988), որտեղ

փաստավավերագրական Հարուստ Հենքի վրա պատկերված են իր գոյապահպանման Համար Հայ ժողովրդի Հերոսական կոիվները: Այստեղ է գրել բազմաթիվ նոթեր ու Հրապարակախոսական հոդվածներ:

Սակայն եզվարդյան առանձնատանը Ուլուբայանի Հեղինակած գործերի մեծ մասը պատմագիտական Հետազոտություններ են, որոնցից ամեն մեկը արժեքավոր ներգրում է Հայ ժողովրդի երկար դարերի ազատագրական մաքառումների տարեգրության մեջ:

Հայաստան տեղափոխվելուց երկու տարի անց՝ 1969թ., Բագրատ Ուլուբայանը պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Արցախի պատմությունը Հնագույն ժամանակներից մինչև 10-րդ դարը» թեմայով, իսկ չորս տարի Հետո՝ 1973թ., Հաղթահարելով Ադրբեջանի պատմաբանների կատաղի դիմադրությունը, պաշտպանում է «Խնչենի իշխանությունը 10 - 15-րդ դարերում» դոկտորական ատենախոսությունը, ուր մատենագիտական, վիմագրական ու ձեռագիր նյութերի խորազնին քննությամբ ներկայացված է Մեծ Հայքի ծայրագույն արևելյան նահանգի քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային վիճակը միջնադարում: 1979թ. լույս է տեսնում «Ոսկե շրթա» գիրքը, որը Հայ ժողովրդի պատմության տարբեր շրջանների կնճռոտ խնդիրների գիտական խորաթափանց Հետազոտություն է: Այստեղ, մասնավորապես, քննության են առնված «Աշխարհացոյցի» ստեղծման ժամանակաշրջանի կարևոր իրողությունները, Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության վիճահարույց մի շարք Հարցեր:

Հետևում է նոր աշխատություն՝ հրատարակվում է «Գանձասար» գիրքը (Երևան, 1981), որի մեջ տրված են միջնադարյան Արցախի նշանավոր պատմաճարտարապետական հուշարձան-Համալիրի ստեղծման պատմությունը և ճարտարապետական նկարագիրը. Հեղինակը ժամանակին, երբ դեռ ուսուցչություն էր անում Գիշիում, մանրազնին ուսումնասիրել էր հուշարձանի որմերին, Համալիրի տարածքի գերեզմանաքարերի վրա փորագրված բոլոր արձանագրությունները, որոնք առանձնակի արժեք ունեն որպես Հայաստանի միջնադարյան պատմության ուսումնասիրության ստույգ աղբյուրներ:

Աղբյուրագիտական Հարուստ նյութերի Հիման վրա գիտնականը ստեղծում է «Իրվազներ Հայոց Արևելից պատմության» նշանավոր մենագրությունը (Երևան, 1981), որում հաստատում է Հայաստանի Հյուսիսարևելյան նահանգների միավորման շնորհիվ վաղ միջնադարում վարչաքաղաքական միասնական Հզոր միավորի ստեղծումը և նրա բնիկ Հայ բնակչության պայքարը ազգային ինքնության Համար՝ Առանշահիկ նախարարական-թագավորական տոհմի գլխավորությամբ:

Միմյանց լրացնում են նշված այս աշխատությունը և 1998թ. գիտնականի լույս ընծայած «Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը» նույնքան արժեքավոր ուսումնասիրությունը: Բազմաթիվ վավերագրերի քննությամբ գրքում ցույց է տրվում, որ Հայոց Արևելից կողմանց եկեղեցին ու մշակույթը ոչ թե բուն աղվանական-թուրքական են, ինչպես փորձում են ապացուցել ադրբեջանցի կեղծարարները, այլ մաքուր Հայկական, որոնք դարերի ընթացքում մեծ դեր են խաղացել ընդհանուր Հայկական եկեղեցու պատմության և Հայ ժողովրդի մշակութային կյանքի մեջ:

Հայոց պատմությունը ուսումնասիրողների և Հատկապես սփյուռքահայ դպրոցների Համար անգնահատելի նշանակություն ունեցավ «Զրուցարան» վերնագրով գիրքը (Հ. Ա., 1987, Հ. Բ., 1988, վերամշակված և մեկ Հատորով 1991), որը ընթերցողին մատուցում է պատմագեղարվեստական եղանակով ու Հյուսիսի լեզվով գրված գրույցակներին՝ նվիրված Հայրենի պատմության առավել կարևոր դեպքերին ու դեմքերին:

Եվ երբ սկսվեց արցախյան ազատագրական շարժումը, գրողն ու գիտնականը իր Հայրենակիցների տագնապանների և ուրախությունների Հետ էր: Չնայած առաջացած տարիքին և առողջական ոչ բարվոք վիճակին, նա իր գրչով նոր նպաստ բերեց մաքառող

ժողովրդին: 1994թ. Հրատարակեց «Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը», նույն թվականին՝ «Արցախի գոյապայքարը» ուսումնասիրություն-հիշատակարանը, 1997թ.՝ մեծածավալ ու մեծարժեք «Արցախյան գոյապայքարի տարեգրությունը»:

Խնչպես տեսնում ենք, ավելի քան 30 տարում Ուլուբաբյանի ստեղծած գիտական Հարուստ գրադարանում գերազանցապես Հայրենի Արցախն է, նրա Հերոսական մաքառումների և մշակութային ոգորումների տարեգրությունը:

Գիտնականը զբաղվել է նաև թարգմանական աշխատանքով: Գրաբարից նա գրական աշխարհարարի է թարգմանել ու Հրատարակել Հայ Հոգևոր մշակույթի գանձարանում բացառիկ տեղ գրավող մի քանի դասական երկեր, մասնավորապես՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը (2000)»; Լազար Փարպեցու «Հայոց պատմությունը» և «Թուղթ Վազան Մամիկոնյանին» աշխատասիրությունները (1982), Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալյանցի «Համառոտ պատմություն աղվանից երկրի» գործը (1997). որոնք բոլորն էլ լույս են տեսել թարգմանչի ընդարձակ առաջարաններով (որոնցից ամեն մեկն առանձին քննախույզ Հետազոտություն է) և Հանգամանալից ծանոթագրություններով:

Բ.Ուլուբաբյանը նաև կատարել է մի շարք գեղարվեստական ստեղծագործությունների թարգմանություններ՝ ռուսերենից Հայերեն, մասնավորապես Զինգի Այթմատովի «Մնաս բարով Գուլսարի» վիպակը (1968) և Յուրի Բոնդարևի «Տաք ձյուն» վեպը (1972):

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, արցախահայության ազատագրական պայքարի պսակը լինելով, նաև մարմնացումն է այն գաղափարների, որոնց իրականացման Համար տասնամյակներ առաջ գինվորագրվել էին Ուլուբաբյանը և նրա Հայրենասեր, խիզախ ու անկոտրում Համախոհները:

Միջնադարյան մենաստաններում ու վանքերում Հավանաբար այսպես էին ապրում և ստեղծագործում Հայ մշակույթի մեծ երախտավորները՝ Հեռու աշխարհիկ վայելքներից, Հակված ձեռագրերի, վավերագրերի, մագաղաթյա մատյանների վրա: Բազրատ Ուլուբաբյանը գնում է նրանց ճանապարհով: Մենք այսօր խոնարհվում ենք Համեստության, աշխատասիրության, Հայրենասիրության տիպար այդ զարմանալի մարդու առջև, որին ոչինչ չհրապուրեց կյանքում, բացի իր մայր ժողովրդին, Հայոց գիտությունը և նրա գրականությունը անշահախնդիր ու որդիական անսակարկ սիրով ծառայելու գաղափարից և գործից:

Հ.Ռ.ՍԻՄՈՆԻԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս